Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-089) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

No.	***Առաջարկության հեղինակը***	***Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը***	***Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)***	***Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը***	***Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը***
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս	Օրենքով ավագանու նիստերին մասնակցելու և ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց շրջանակի հստակ ամրագրումն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է ավագանու նիստի բնականոն ընթացքի ապահովմանը, ինչը կարող է խոչընդոտվել ավագանու նիստերին մասնակ-ցության մուտքը ցանկացած քաղաքացու համար ազատ լինելու դեպքում: Հատկանշական է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի:	Ընդունվել է, 1-ին հոդվածի 1-ին մասը Նախագծից հանվել է	Ընդունվել է

			Այսինքն՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ևս ամրագրել է ավագանու նիստերին միայն համայնքի ավագանու կողմից հրավիրված լինելու դեպքում ցանկացած անձի մասնակցության սկզբունքը: Ընդ որում, նշված կարգավորումը վերաբերում է բոլոր համայնքներին՝ անկախ տվյալ համայնքի բնակիչների թվից: Ինչ վերաբերում է նախագծի հիմնավորման մեջ վկայակոչվող՝ համայնքային նշանակության հարցերի քննարկման հրապարակայնությունն ապահովելու անհրաժեշտությանը, ապա հարկ է նկատի ունենալ, որ նիստի ընթացքի մասին հանրության տեղեկացված լինելու իրավունքը լիարժեք կարող է ապահովվել նիստերի առցանց հեռարձակման միջոցով, այդպիսի հնարավորությունն արդեն իսկ նախատեսված է օրենքով: Հավելենք նաև, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավագանու նիստերն արձանագրվում		

			են: Այդ արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ենթակա են տեղադրման նաև Երևանի պաշտոնական համացանցային կայքում: Ինչպես նաև օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավագանու նստաշրջանների ընթացքում ավագանու կանոնակարգով 2 ամսվա մեջ առնվազն 1 նիստի ընթացքում քաղաքապետը, քաղաքապետի տեղակալները և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները պատասխանում են ավագանու անդամների բանավոր հարցերին: Այդ նիստերի սղագրությունը նույնպես նիստից հետո երկշաբաթյա ժամկետում տեղադրվում է քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում: Վերոնշյալը նկատի ունենալով նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանափակվել է ավագանու նիստերի անցկացման բնականոն ընթացքն ապահովելու, ինչպես նաև անվտանգությունն ապահովելու		

			նկատառումներից և այդ առումով գտնում ենք, որ այդ սահմանափակումն արդարացված է:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս	Վերոգրյալով պայմանավորված մասնակի ընդունելի չէ նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը, որն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7.2 Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրում լրագրողներն իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս իրավունք ունեն ներկա գտնվելու ավագանու հրապարակային նիստերին՝ ավագանու նիստերի դահլիճին անմիջապես կից առանձնացված տեղում, որտեղից ուղղակիորեն տեսանելի և լսելի է ավագանու նիստը:»:	Ընդունվել է, Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը լրամշակվել է	Ընդունվել է